



**Burbank Unified School District**  
Superintendent's Office  
1900 W. Olive Avenue  
Burbank, CA 91506  
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

**Board of Education**  
Steve Frintner, President  
Charlene Tabet, Vice President  
Steve Ferguson, Clerk  
Dr. Emily Weisberg  
Dr. Armond Aghakhanian

**Superintendent**  
Matt Hill, Ed.D.

## Նորություններ գերատեսչի կողմից 10.12.21

Եվս մեկ անգամ շնորհավորում ենք Ջոն Մյուլիթր միջանկյալ դպրոցի ուսուցչուհի Ամելիա Չիտամին, ով արժանացել է Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի կողմից ճանաչված տարվա 16 լավագույն մանկավարժներից մեկն՝ իր օրինակելի նվիրվածության, դասարանական գրավիչ գործելակերպի, դրական ձեռքբերումների և մասնագիտական նվիրվածության համար: Հավելյալ տեղեկություններ կարելի է ստալա սեղմելով այս հղումը [Los Angeles County Teachers of the Year](#)

### Աշխատակազմի պատվաստումներ

Ինչպես ձեզանից շատերը գիտեն, Կրթական գրասենյակը որոշում ընդունեց, որով պարտադրվում է, որ ԲԴՄՇ-ի բոլոր աշխատակիցները լիովին պատվաստվեն մինչև հոկտեմբերի 22-ը: Մոտենալով այդ օրվան, ես ցանկանում եմ հայտնել, որ ներկայումս որոշ աշխատակիցներ դեռ պատվաստանյութ չեն ստացել և հնարավոր է, որ դա անձնակազմի փոփոխություն կամ թափուր պաշտոններ ստեղծի: Ավելի կոնկրետ տեղեկություն կտրվի մի փոքր ուշ: Շնորհակալություն ձեր համբերատարության համար, քանի դեռ մենք իրականացնում ենք անհրաժեշտ այս պահանջը՝ մեր աշակերտների և աշխատակազմի անվտանգությունն ապահովելու համար:

### Աշակերտների պատվաստումներ

Հոկտեմբերի 1-ին, [նահանգապետ Նյուսոմը հայտարարեց](#), որ անձամբ դպրոց հաճախելու համար, բոլոր աշակերտները պետք է պատվաստված լինեն: Այն պետք է կատարվի FDA-ի կողմից պատվաստանյութի լիարժեք հաստատումից հետո (7-12 և U-6 դասարաններ): Երբ FDA-ը հայտարարի ամբողջական իր հաստատումը, մենք հավելյալ տեղեկություն կտրամադրենք: Միաժամանակ, մենք կշարունակենք տրամադրել պատվաստումների կլինիկաներ և թե որտեղից կարող են աշակերտները [ստանալ պատվաստանյութ](#):

### COVID քննություն

Հոկտեմբերի 18-ից սկսած, մենք կդադարեցնենք COVID-ի քննություն կատարելը: Մենք կշարունակենք ստուգել միայն մարզիկներին և պատվաստանյութ չստացած աշխատակիցներին: Մենք շարունակում ենք քաջալերել աշակերտներին և աշխատակիցներին քննություն անցնել գավառի ցանկացած քննական կետում. <https://drive.google.com/file/d/1clEdf-hIpfEmA-147gbKxlGRkOka7OU/view>.

Մենք ծախսել ենք քննություն կատարելու համար պետության կողմից հատկացված մեր բոլոր ֆինանսները (\$2.3 միլիոն դոլար): Մենք դիմել ենք FEMA-ի օգնությանը, որպեսզի

կարողանանք շարունակել քննությունները մինչև կիսամյակի վերջը: Դեռ ոչ մի պատասխան չենք ստացել և ոչ մի երաշխավորում չունենք, որ երբևէ/երբ կստանանք այն: Բացի այդ, օգոստոսից ի վեր, մենք փորձում ենք փորձարկման անվճար փաթեթներ ձեռքբերել գավառի հանրային առողջապահական գրասենյակից (CDPH), բայց ապարդյուն:

Ըստ մեր ցուցատախտակների, մենք կատարում ենք շաբաթական 4,215-5,418 քննություն՝ շաբաթական 11-27 դրական արդյունքով (այս արդյունքներում ներառված են մի քանի կեղծ դրական դեպքեր): Սա նշանակում է, որ դրական արդյունքները կազմում են 0.14-0.5%: [https://drive.google.com/file/d/1aJPDEtXTXQNDYXtjmgh3IjnToop\\_gli0/view](https://drive.google.com/file/d/1aJPDEtXTXQNDYXtjmgh3IjnToop_gli0/view)

Սահմանափակ ռեսուրսների մեր լավագույն օգտագործումը պետք է լինի ընթացակարգերի մեղմացման և անհատների պատվաստում ստանալու համար: Այս ջանքերի շնորհիվ կանխել ենք Կորոնավիրուսի տարածումը մեր դպրոցներում:

Անկեղծորեն,



Դոկտոր Մաթ Հիլլ (նա/նրա)

Գերատեսուչ

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան